ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի գիտության գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Ա.Խ.Գրիգորյան

« 13 » 01 2023 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ռոմիկ Արմենի Ղազարյանի «ՀՀ բնակչության կենսամակարդակի աճի ուղիների տնտեսամաթեմատիկական գնահատումը» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի համար:

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Ինժեներական տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 2023 թվականի հունվարի 11-ի նիստում (արձանագրություն թիվ 6):

Նիստին մասնակցում էին՝ տնտ.գ.թ. դոցենտներ Ա.Ս. Թադևոսյանը, Լ.Վ. Զարխիֆալակյանը, Ե. Վ. Պետրոսյանը, Գ. Ա. Շուշանյանը, Ս. Ա. Մկրտչյանը, Վ. Բ. Օդաբաշյանը, Հ. Խ. Խաչատրյանը, Հ. Հ. Գրիգորյանը, Կ. Ս. Նիկոլյանը, Կ. Վ. Տուրյանը, Կ. Գ. Մկրտչյանը, Լ. Լ. Աղաջանյանը, Տ. Հ. Նասոյանը, Գ. Ն. Արևշատյանը, Գ.Ա.Շուշանյանը, Ջ.Ա.Թադևոսյանը, Դ.Ա.Անդրոյանը, Ս.Ֆ.Մանուկյանը, Գ.Ս.Գրիգորյանը, Ն.Պ.Ադոնցը, Լ.Կ.Հարությունյանը, Օ.Ա.Գալստյանը, Կ.Մ.Խաչատրյանը, Ա.Խ.Խաչատրյանը ասիստենտներ Ա. Մ. Մովսեսյանը, Ա. Ա. Աբրահամյանը, Ա. Ս. Աքելյանը, դասախոսներ Գ. Ա. Խաչատրյանը, Հ. Վ. Գզրարյանը, Մ. Ռ. Զարխիֆալակյանը, Մ. Կ. Ղազարյանը, Խ. Ա. Շահբազյանը, Գ.Ս.Այվազյանը, Լ.Ա.Ալավերդյանը, Հ.Մ.Սաֆարյանը, Ն.Հ.Խալաթյանը, Ա.Ռ.Ավետիսյանը, Գ.Ա.Հարությունյանը, Ն.Գ.Սահակյանը, Հ.Ս.Թադևոսյանը, Ի.Է.Ավանիսյանը և Մ. Գ. Տավարացյանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Բնակչության կենսամակարդակը տնտեսական ու սոցիալական հարաբերությունների ընդհանրացված արտահայտությունն է, որը բնութագրում է ցանկացած երկրի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Բնակչության կենսամակարդակի աճը կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է ցանկացած պետության համար, որոնցից յուրաքանչյուրը որդեգրում է այս կամ այն ռազմավարությունը՝ կախված տարածաշրջանից, տնտեսական զարգացման մակարդակից և պոտենցիալ հնարավորություններից:

Տնտեսական աճը կենսամակարդակի բարձրացման համար առանցքային դեր ունի, սակայն եկամուտների՝ անգամ սրընթաց աճը, կարող է չհանգեցնել ցանկալի արդյունքի: Կենսամակարդակն իրապես բարձրացնելու համար առավել կարևոր գործոն է համարվում բնակչության զարգացումը: Որպես մարդկային գործունեության վերջնական նպատակ, մարդկային զարգացումը վերջին տարիներին շատ ավելի է կարևորվում, քան տնտեսական աճը:

Բնակչության կենսամակարդակը պայմանավորված է նաև տվյալ երկրում անհավասարության մակարդակով: Առանց անհավասարության մակարդակը գնահատելու՝ հնարավոր չէ ճիշտ գնահատել տվյալ երկրի բնակչության կենսամակարդակը, որովհետև տնտեսական աճը հանգեցնում է երկրում ընդհանուր կենսամակարդակի բարելավմանը, սակայն անպատասխան է մնում այն հարցը, թե եկամտային որ խմբերի եկամուտներն են առավելապես աճել:

Ատենախոսության թեման արդիական է, քանի որ ներկայումս Հայաստանում կարևորվում են բնակչության զարգացման նաև ոչ եկամտային բաղադրիչները (առողջությունը, հանգիստը, կրթությունը, զբաղվածությունը, սոցիալիզացիան և այլն): Այս ամենը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է բացահայտել և մոդելավորել այս գործոնների աճի, ինչպես նաև դրանց ու բնակչության կենսամակարդակի միջև կապի բարելավման հնարավորությունները:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է գնահատել Հայաստանի Հանրապետության բնակչության կենսամակարդակն ու դրա աճի ուղիները: Նշված նպատակի իրագործման համար ատենախոսության շրջանակներում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- նկարագրել և ուսումնասիրել բնակչության կենսամակարդակն արտացոլող հիմնական ցուցանիշները,
- ուսումնասիրել և ներկայացնել եկամուտների անհավասարության չափման տարբեր մեթոդներ ու մոտեցումներ, նկարագրել դրանց գործիքակազմը, ինչպես նաև համեմատական կարգով դրանց բնորոշ առավելություններն ու թերությունները,
- ուսումնասիրել համեմատաբար նոր և համապատասխան գրականության մեջ դեռևս քիչ քննարկված անհավասարության գնահատման Պալմայի մեթոդը,
- բացահայտել Հայաստանում աշխատավարձերի տարբերության հիմնական պատճառները, ինչպես նաև գնահատել տնտեսական և սոցիալական մի շարք գործոնների ազդեցությունն աշխատավարձի մակարդակի վրա,
- վերլուծել Հայաստանում տնտեսական աճի և մարդկային զարգացման միջև փոխկապվածությունները, ինչպես նաև էմպիրիկ մեթոդներով բացահայտել այդ փոխադարձ կապի բնույթը,
- պարզել Հայաստանում անհավասարության մակարդակի և օտարերկրյա ուղղակի ներդրումների կապի բնույթը, ինչպես նաև էմպիրիկ մեթոդներով գնահատել այս և մի շարք այլ գործոնների ազդեցությունը անհավասարության մակարդակի վրա:

Հետազոտության գիտական նորույթը

1. Հիմնավորվել է, որ միջին դեցիլները գրավում են ընդհանուր եկամտի կեսը, և այդ խմբերում եկամտի մասնաբաժինը համեմատաբար կայուն է: Էմպիրիկ մեթոդներով բացահայտվել է, որ Պալմայի գործակիցը, ներառելով ավելի քիչ տեղեկատվություն, ի զորու է բացատրել Ջինիի գործակցի տատանումները գրեթե 100%-ով:
2. Ձևավորվել է աշխատավարձի մակարդակի և դրա վրա ազդող տարբեր տնտեսական ու սոցիալական գործոնների ազդեցության մոդել: Գնահատվել է նախ ամբողջ աշխատուժը, այնուհետև տարբեր կրթական մակարդակ ունեցող աշխատուժը:
3. Ավտոռեգրեսիվ բաշխված լագի (ARDL) մեթոդով գնահատվել է Հայաստանում տնտեսական աճի և մարդկային զարգացման միջև փոխադարձ կապը: Բացահայտվել է, որ մարդկային զարգացման ազդեցությունն ավելի մեծ է տնտեսական աճի վրա, քան հակառակ ազդեցությունը, ինչը նշանակում է, որ առողջության և կրթության բարելավումներն ավելի ինտենսիվ են ազդում եկամուտների աճի վրա, քան եկամուտների աճը՝ առողջության և կրթության բարելավումների:
4. Գնահատվել է Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների, ինչպես նաև մի շարք այլ գործոնների ազդեցությունը անհավասարության մակարդակի

փոփոխության վրա: Որպես անհավասարության ցուցանիշ՝ կիրառվել է Պալմայի գործակիցը, որը ոչ շատ տարածված և նոր գործիք է:

5. Բացահայտվել է, որ Հայաստանում ՕՈՒՆ-ի և եկամուտների անհավասարության միջև կապը բնութագրվում է շրջված Ս-աձև կորի միջոցով: Հիմնավորվել է, որ ՕՈՒՆ-ը սրում է եկամուտների անհավասարությունը, սակայն գոյություն ունի շրջման կետ, որից հետո ՕՈՒՆ-ի հետագա աճը կնվազեցնի այն: Ըստ ստացված գնահատականների՝ Հայաստանը կհասնի շրջադարձային այդ կետին, երբ ՕՈՒՆ-ի մասնաբաժինը ՀՆԱ-ում գերազանի 19%-ի շեմը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք հիմնական գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության տեքստը շարադրված է 120 տպագիր էջի վրա՝ առանց հավելվածների:

Ատենախոսության **«Ներածություն»** բաժնում ատենախոսը հիմնավորել է թեմայի արդիականությունը, ձևակերպել է հետազոտության նպատակն ու առաջադրված խնդիրները, ներկայացրել է ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթները, դրանց գործնական նշանակությունը, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ **«Բնակչության կենսամակարդակի փոփոխությունը գնահատող ցուցանիշները»** գլխում, հեղինակը ներկայացրել է տարբեր ցուցանիշներ, որոնք սովորաբար օգտագործվում են բնակչության կենսամակարդակի գնահատման համար: Այնուհետև վերլուծել է ՀՀ բնակչության կենսամակարդակն արտացոլող հիմնական ցուցանիշները, ինչպես նաև կատարել է զարգացման մակարդակի, անհավասարության և կենսամակարդակի ցուցանիշների միջազգային համեմատական վերլուծություն ՀՀ, ԵԱՏՄ և հարևան երկրների միջև:

Ատենախոսության երկրորդ՝ **«Բնակչության կենսամակարդակի անհավասարության գնահատումը»** գլխում, հեղինակը ներկայացրել է բնակչության եկամուտների անհավասարության չափման տարբեր մեթոդներ ու մոտեցումներ, որոնցից առանձնացրել և բազմակողմանի վերլուծության է ենթարկել Պալմայի գործակիցը, որը ոչ շատ տարածված գործիք է: Այնուհետև հեղինակը վերլուծել է ՀՀ բնակչության եկամուտների բաշխման անհավասարությունը՝ կիրառելով Պալմայի և Աթկինսոնի ինդեքսները:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ բնակչության կենսամակարդակի աճի տնտեսամաթեմատիկական վերլուծությունը»** գլխում, հեղինակը գնահատել է Հայաստանում տնտեսական և սոցիալական մի շարք գործոնների ազդեցություններն աշխատավարձի մակարդակի վրա: Հաջորդիվ ուսումնասիրել է Հայաստանում տնտեսական աճի և մարդկային զարգացման միջև փոխադարձ կապը: Այդ նպատակով հեղինակը կառուցել և գնահատել է երկու ռեգրեսիոն մոդելներ, որոնցից մեկը բնութագրում է տնտեսական աճի ազդեցությունը մարդկային զարգացման դինամիկայի վրա, իսկ երկրորդը՝ հակառակը: Այնուհետև հեղինակը գնահատել է օտարերկրյա ուղղակի ներդրումների և մի շարք այլ ցուցանիշների ազդեցությունը Հայաստանում եկամուտների բաշխման անհավասարության մակարդակի վրա: Այս հետազոտության համար, որպես անհավասարության ցուցանիշ, հեղինակն օգտագործել է Պալմայի գործակիցը:

Ատենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում հեղինակը ներկայացրել է հետազոտության հիմնական արդյունքները և կատարել որոշ առաջարկություններ ՀՀ բնակչության կենսամակարդակի աճի վերաբերյալ:

Ատենախոսության արդյունքների տեսական և կիրառական նշանակությունը

Ատենախոսության շրջանակներում կատարված վերլուծությունների արդյունքները կարող են նպաստել բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմնախնդրի՝ առավել խորությամբ ընկալմանը: Ստացված արդյունքներն ու եզրահանգումները կարող են կիրառվել պետական կառույցների կողմից սոցիալ-տնտեսական քաղաքականություն մշակելու, մարդկային զարգացումը խթանելու, ինչպես նաև երկրում անհավասարությունը մեղմելուն ուղղված հստակ քաղաքականություն մշակելու համար: Բնակչության միջև եկամուտների բաշխման անհավասարության չափման Պալմայի գործակիցը, որպես անհավասարության մակարդակն արտացոլող այլընտրանքային մեթոդ, կարող է կիրառվել ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» տարեկան պարբերականությամբ հրապարակվող վիճակագրական-վերլուծական զեկույցներում:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Աշխատանքում (էջ 8) կենսամակարդակը բնորոշվում է որպես բնակչության և հոգևոր կարիքների բավարարման աստիճան: Քննարկվող մոդելներից և ոչ մեկում հոգևոր կարիքները կոնկրետ ցուցանիշներով չեն դիտարկվում:

2. Հետազոտության երրորդ գլխում (էջ 79) դիտարկվել է ՀՀ-ում աշխատավարձի մակարդակը գնահատող մոդել, որի տվյալների բազան ընդգրկում է 7703 հարցվող: Ըստ ՀՀ վիճակագրական ծառայության տվյալների ՀՀ աշխատուժը կազմել է 1,296 հազ. մարդ, հետևաբար մոդելի արդյունքները դժվար է գնահատել ներկայացուցչական:

3. Էջ 97–ում Պալմայի ինդեքսի հաշվարկման ժամանակ վերլուծվում է ՕՈՒՆ-ի և եկամուտների միջև կապը: Ըստ հաշվարկների ՕՈՒՆ-ի ազդեցությունը եկամուտների անհավասարաչափ բաշխման մեղմացման վրա դրական կլինի, եթե կազմի ՀՆԱ-ի 19%: Այժմ այն կազմում է ոչ ավել քան 4%: Հետևաբար որքանո՞վ է նպատակահարմար և օգտակար նման կախվածության դիտարկումը կենսամակարդակի աճի ուղիների բացահայտման համար:

4. Աշխատանքի 1.2 ենթակետը (էջ 13) ծանրաբեռնված է կենսամակարդակը այս կամ այն տեսանկյունից մեկնաբանող այնպիսի ցուցանիշների առավել քան մանրակրկիտ ներկայացմամբ, որոնք դասագրքային նյութ են:

5. Ըստ ՀՀ վիճակագրական տվյալների 2021թ. աշխատուժից դուրս բնակչության այն մասը, որը 25-55 տարեկան է, կազմել է 316,1 հազ. մարդ: ՀՀ բնակչության այս խմբերի կենսամակարդակի աճի քննարկումը թեմայի մեկնաբանման առանցքային խնդիրներից պետք է լիներ, որը աշխատանքում ոչ մի տեսանկյունից չի դիտարկվում:

Եզրակացություն

Կատարված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության արժանիքները, այլ ակնկալվում է, որ դրանք հաշվի կառնվեն հեղինակի կողմից իր հետագա հետազոտություններում:

Ատենախոսության շրջանակներում կատարված վերլուծությունների արդյունքները կարող են նպաստել բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմնախնդրի՝ առավել խորությամբ ընկալմանը: Ստացված արդյունքներն ու եզրահանգումները կարող են կիրառվել պետական կառույցների կողմից սոցիալ-տնտեսական քաղաքականություն

մշակելու, մարդկային զարգացումը խթանելու, ինչպես նաև երկրում անհավասարությունը մեղմելուն ուղղված հստակ քաղաքականություն մշակելու համար:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի հիմնական արդյունքները, որոնք հրատարակված են հեղինակի 7 գիտական հոդվածներում:

Ընդհանուր առմամբ, Ռ. Ա. Ղազարյանի՝ «ՀՀ Բնակչության կենսամակարդակի աճի ուղիների տնտեսամաթեմատիկական գնահատումը» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է, Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ինժեներական տնտեսագիտության
և կառավարման ֆակուլտետի դեկանի ժ/պ
տնտ.գիտ.թեկնածու, դոցենտ Ա.Ս.Թադևոսյան

Գրախոսներ՝
տնտ.գիտ.թեկնածու, դոցենտ Գ. Ա. Շուշանյան

տնտ.գիտ.թեկնածու, դոցենտ Ե. Վ. Պետրոսյան

Ա.Ս.Թադևոսյանի, Գ. Ա. Շուշանյանի և Ե. Վ. Պետրոսյանի ստորագրությունները հաստատում եմ՝

ՀԱՊՀ գիտական քարտուղար,
տեխ.գիտ.թեկնածու Ծ.Ս. Հովհաննիսյան

13.01.23թ.